ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07.05.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 **30.04.2019**թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով նախատեսված համապատասխան տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են և բավարարում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **«Վարբառ»** և **«Էլեկտրիկա Գռուպ»** ՍՊԸ-ների՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերն և իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

«Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի կողմից՝

1) Չէին ներկայացվել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի) 3.1 կետի 2-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը (նմանատիպ պայմանագրեր, հաշիվ ապրանքագրերի պատճեններ, հանձնման-ընդունման արձանագրություններ կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված տարբերակը):

2) Առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում նշված էր՝ հաճախականությունը (Hz)-50-60, մինչդեռ հրավերով նախատեսված էր եղել 50 Հերց, որը համապատասխանում է ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի լարման հաճախականությանը, սակայն լուսամփոփների վրա կարող են նշված լինել նաև 50/60 Հց (HZ), բայց ոչ՝ 50-60 Հց (HZ):

3) Չէր ներկայացվել առաջարկվող ապրանքների արտադրման տարեթվի մասին տեղեկատվությունը, մինչդեռ հրավերով սահմանված էր, որ լուսամփոփները պետք է լինեն 2017թ.-ից բարձր արտադրության:

4) Չէր ներկայացվել առաջարկվող ապրանքների վրա հերթական համարների մակնշման մասին տեղեկատվությունը, մինչդեռ հրավերով սահմանված էր, որ լուսամփոփների իրանի տեսանելի հատվածը պետք է մակնշված լինի «ՊՆ-04000» նիշից բարձր հերթական չկրկնվող հնգանիշ համարներով:

5) Չէր ներկայացվել առաջարկվող ապրանքների հավաստագրերի մասին տեղեկատվությունը, մինչդեռ հրավերով սահմանված էր, որ լուսամփոփները պետք է ունենան հավաստագրեր՝ TUV կամ եվրոպական նորմերին համարժեք կամ EAC (Մաքսային միության համապատասխանության):

1.3 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները՝ **10.05.2019**թ.-ին սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը, և գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով (Armeps համակարգի միջոցով) ծանուցեց «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.4 Սահմանված ժամկետում՝ **13.05.2019**թ.-ին, վերոնշյալ մասնակիցը ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը շարունակվեց:

1.5 **16.05.2019**թ.-ին, «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված (շտկված) փաստաթղթերը գնահատելիս, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

1) Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերավերող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

2) Մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի) 3.1 կետի 2-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերում առկա են հետևյալ համանման (նմանատիպ) պայմանագրերի և կից փաստաթղթերի պատճենները.

Համանման (նմանատիպ) պայմանագրերի							Հրավերի 2-րդ մասի 3.1 կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝
հ/հ	ծածկագիրը	կնքման ամսաթիվը	առարկան	գինը (ՀՀ դրամ)	հաշիվ ապրանքագիրը	հանձնման-ընդունման արձանագրությունը կամ հավաստումը	
1	RFQ 041/18	25.06.2018թ.	LED լամպեր (լուսատուներ)	9,498,900	առկա է, սակայն նշված չէ պայմանագրի ծածկագիրը և ստացողի կողմից ստորագրված (հաստատված) չէ	բացակայում է	չի համապատասխանում (բավարարում)
2	ԳՄՃՀ-ԳՀԱՊՁԲ-18/3	08.11.2018թ.	Փողոցային լույսեր	960,000	առկա է	առկա է	համապատասխանում (բավարարում) է
3	ՀՀ-ՍՄԿՀ-ԿԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/12	24.12.2018թ.	Փողոցային LED լուսատուներ	6,480,000	առկա է	առկա է	համապատասխանում (բավարարում) է
4	ՀՀ-ՍՄԿՀ-ԿԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8	21.02.2019թ.	Փողոցային LED լուսատուներ	12,000,000	բացակայում է	բացակայում է	չի համապատասխանում (բավարարում)
5	ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ 19/2-2	08.04.2019թ.	Տնտեսող լամպեր	200,000	առկա է, սակայն ստացողի կողմից ստորագրված (հաստատված) չէ:	բացակայում է	չի համապատասխանում (բավարարում)
6	ԳՀԱՊՁԲ-2019/7-1-11-ԵՊԲՀ	23.04.2019թ.	Լուսատուներ	762,000	առկա է, սակայն ստացողի կողմից ստորագրված (հաստատված) չէ:	բացակայում է	չի համապատասխանում (բավարարում)

3) Ներկայացված պայմանագրերից և կից փաստաթղթերից սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի) 3.1 կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան (բավարար) առկա է միայն թվով 2 պայմանագիր («ԳՄՃՀ-ԳՀԱՊՁԲ-18/3» և «ՀՀ-ՍՄԿՀ-ԿԿԾ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրերով) կից փաստաթղթերով, որոնք սակայն գումարային արտահայտությամբ (7,440,000 ՀՀ դրամ) պակաս են «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի (19,800,000 ՀՀ դրամ) հիսուն տոկոսից և հետևաբար, Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համանման (նմանատիպ) գնահատվել չեն կարող:

1.6 Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 48-րդ և 61-րդ կետերի պահանջները և սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորփառություն» որակավորման պայմանները գնահատել անբավարար՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորփառություն» որակավորման չափանիշի պահանջներին, նրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանին:

1.7 Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

1.8 Հիմք ընդունելով սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Վարբառ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրած հայտը գնահատել բավարար, վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյանի կողմից ներկայացվելիք՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս. Սարգսյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան